



ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի. գ. ք.

ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի. գ. ք.

**ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ՝
ՕՐՀՈՒՄԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏՈՎ
ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ «ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍՏԵՂԾՎԱԾ
ԱՆԿԱԽ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ՄԱՐՄՆՈՒՄ» ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ՝ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԻՐՎԱԿԱՆ ՆՈՐ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**



Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում ընդունված ցանկացած որոշման, կատարված գործողության կամ անգործության օրինականությունը նյութական և ընթացակարգային իրավունքի տեսակետից վիճարկելու նպատակով դատարանում և (կամ) օրենքին համապատասխան արեղծված անկախ և անկողմնակալ մարմնում ընդունված որոշումների վերանայման հնարավորություն է նախատեսում շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչների համար, ովքեր

ցուցաբերում են բավականաչափ շահագրգռվածություն կամ, որպես այլընկրանքային տարբերակ, համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա համապատասխան Կողմի վարչական վարույթի նորմերով սահմանվում է որպես նախապայման:

Պետք է փաստել, որ կոնվենցիոն որևէ դրույթ չի խոչընդոտում Կողմերին օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում համապատասխան որոշումների վերանայման հնարավորություն



տրամադրել բոլոր անձանց՝ առանց տարբերակում դնելու: Օրինակ՝ Լատվիայի օրենսդրությամբ այդպիսի իրավունք ունեն բոլոր ֆիզիկական անձինք, կազմակերպությունները, ինչպես նաև անձանց խմբերը¹: Մինչև ժամանակ, Կոնվենցիան նախատեսում է հիշյալ իրավունքի տրամադրման վերը հիշատակված նվազագույն չափանիշը:

Այդ կապակցությամբ, համառոտ անդրադառնալով այն չափանիշներին, որոնց պետք է համապատասխանի վերանայումն իրականացնող մարմինը: Նախ՝ հարկ է նշել, որ Օրհուսի կոնվենցիան ճկունություն է նախատեսում Կոդեքսի համար համապատասխան գործերը քննող մարմինների ընտրության հարցում՝ միաժամանակ ամրագրելով ընտրության հիմնական չափանիշները՝ որոշումների վերանայումն իրականացվում է *դապառասնում և (կամ) օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում*:

«Օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմին» ձևակերպումը ենթադրում է՝

1) համապատասխան մարմնի ստեղծում օրենքով.

2) համապատասխան մարմնի անկախություն իշխանության այլ մարմիններից և որևէ մասնավոր կազմակերպության հետ կապվածության բացակայություն.

3) համապատասխան մարմնի անկողմնակալություն, վերջինիս ընթացակարգերի արդար, հավասար, ժամանակին լինելը ու չափազանց մեծ ծախսերի հետ կապված չլինելը², ինչպես նաև իրավական պաշտպանության համարժեք և արդյունավետ միջոցների ապահովում (Կոնվենցիայի հոդ. 9, կետ 4): Այդ կապակցությամբ, օրինակ, Բուլղարիայի կողմից Օրհուսի կոնվենցիայի՝ արդարադատության մատչելիությանն առնչվող 9-րդ հոդվածի 4-րդ կետի պահպանմանը վերաբերող ACCC/C/2012/76 հաղորդակցության արդյունքում Համապատասխանության կոմիտեն արձանագրել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված այն պահանջը, որ հայցի ապահովման և այլ միջոցները պետք է լինեն «արդյունավետ», ներառում է,

մասնավորապես, հստակ պահանջ առ այն, որ այս միջոցները պետք է կանխեն շրջակա միջավայրին անվերականգնելի վնաս պատճառելը: Կոմիտեն նաև նշել է, որ Կոնվենցիան վարչական վարույթին մասնակցությունը չի դիտարկում որպես այդ վարույթի արդյունքում ընդունված որոշումը վիճարկելու առումով արդարադատության մատչելիության նախապայման, և նման ընդհանուր պահանջի նախատեսումը կհակասի Կոնվենցիային:

Կոմիտեն գտել է նաև, որ շրջակա միջավայրին պատճառվելիք հնարավոր վնասի հիմքով նախնական կիրառման որոշումների դեմ բողոքների առումով այն պրակտիկան, երբ վերանայող մարմինները հիմնվում են վիճարկվող ՇՄԱԳ/ՇՄՄԳ որոշումների եզրահանգումների վրա՝ գործի համար նշանակություն ունեցող բոլոր փաստերի և փաստարկների լույսի ներքո շրջակա միջավայրին պատճառվելիք վնասի ռիսկը ինքնուրույն գնահատելու փոխարեն՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի պաշտպանության առանձնահատուկ կարևորություն ունեցող հանրային շահը և շրջակա միջավայրին պատճառվելիք վնասը կանխելու անհրաժեշտությունը, չի երաշխավորում, որպեսզի հիշյալ ընթացակարգերը ապահովեն շրջակա միջավայրին պատճառվելիք վնասը կանխելու համարժեք և արդյունավետ միջոցներ³.

4) համապատասխան մարմնի անկախությունն ու անկողմնակալությունն ապահովելու նպատակով վերջինիս որոշումների բողոքարկման ենթակա լինելը դատական ատյաններում, այլ ոչ պետական իշխանության այլ մարմիններում⁴.

5) Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված՝ համապատասխան մարմնի որոշումների ընդունում կամ արձանագրում գրավոր ձևով, ինչպես նաև հնարավորության դեպքում այդ որոշումների մատչելիություն հասարակայնությանը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն, թե արդյոք կոնկրետ մարմինը հանդիսանում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված անկախ և անկողմնակալ մարմին, ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում՝ հաշ-



ԼՂՀ դատական իշխանություն

վի առնելով վերջինիս համար անհրաժեշտ չափանիշներին բավարարելու հանգամանքը:

Հարկ է նշել, որ առանձին պետություններում որպես անձանց վարչական իրավունքների խախտումները քննող անկախ և անկողմնակալ մարմին հանդես է գալիս Օմբուդսմանը⁵: Այդ կապակցությամբ, Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմին է: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ամրագրում ստացավ Սահմանադրության առանձին⁶ 10-րդ գլխի ներքո, որը բովանդակում է դրույթներ Պաշտպանի ընտրության, նրա գործառույթների և լիազորությունների, ինչպես նաև գործունեության երաշխիքների վերաբերյալ: Սահմանադրական մակարդակում ամրագրվեց, որ Պաշտպանն *անկախ* պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը (Սահմ. հոդ. 191, մաս 1): Սակայն միայն նշված հանգամանքը բավարար չէ Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված մարմին հանդիսանալու համար, քանի որ այդ տեսանկյունից Պաշտպանը պետք է բավարարի մի շարք այլ կարևոր պահանջների: Մասնավորապես, ինչպես վերը նշվեց, *քննարկվող ընթացակարգերը պետք է ապահովեն իրավական պաշտպանության համարժեք և արդյունավետ միջոցներ*: Այդ առնչությամբ, օրենսդրական գործող կարգավորումների պայմաններում, խնդիրներ են ծագում՝ կապված Պաշտպանի կողմից ընդունվող որոշումների իրավական հետևանքների հարցի հետ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 21.10.2003թ. ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 15-րդ հոդվածով ամրագրված կարգավորումներից բխում է, որ *Պաշտպանի կողմից ընդունվող որոշումները համապատասխան պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց համար չունեն պարտադիր նշանակություն, այլ կրում են խորհրդարկական, ուղղորդող բնույթ*⁶: Բացի այդ, օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից տրված բողոքը վերաբերում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմանը, եթե իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով խախտվել են նաև նրա մասնակից ֆիզիկական անձանց (բաժնետերերի, փայտտերերի, անդամների և այլն), ինչպես նաև նրա պաշտոնատար անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, կամ այդ անձինք իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով վնաս են կրել, կամ առկա է այդ անձանց վնաս կրելու հնարավորությունը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ նշված ընթացակարգերը քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից չեն ապահովում իրավական պաշտպանության արդյունավետ և համարժեք միջոցներ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կարծում ենք, որ Պաշտպանի կողմից իրավունքի խախտման առնչությամբ բողոքների քննարկմանն ու նրա որոշումների հետևանքներին առնչվող գործող իրավակարգավորումները չեն բավարարում Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված մարմինների համար անհրաժեշտ պահանջներին: Ուստի՝ Պաշտպանը հանդես չի գալիս որպես Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված՝ համապատասխան որոշումների վերանայումն իրականացնող մարմին:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ մի շարք երկրներում, անկախ այն հանգամանքից՝ Օմբուդսմանը հանդիսանում է Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված անկախ և անկողմնակալ մարմին, թե ոչ, վերջինս չափազանց կարևոր



դերակատարում է ունենում քննարկվող հիմնախնդրին լուծում տալու գործընթացում (Չեխիա⁷, Շվեդիա և այլն): Շվեդիայում, օրինակ, Խորհրդարանական օմբուդսմանն ունի կարգապահական գործառույթներ և իր լիազորություններն իրականացնում է կարծիքների միջոցով, որոնք բավականին հեղինակավոր են: Նա իրավասու է քննելու պաշտոնական դիրքի չարաշահման առնչությամբ քաղաքացիական ծառայողների վերաբերյալ գործերը՝ թեև վերջինիս կողմից նման գործեր հազվադեպ են քննվում: Այդ համատեքստում հենց Խորհրդարանական օմբուդսմանն է բնապահական կանոնադրության մատչելիությունը⁸: Մասնավորապես, այն իրավիճակներում, երբ չկա գրավոր որոշում կամ անձը չի տեղեկացվել որոշման մասին, նա փաստացի չի կարող բողոքարկել որոշումը: Տվյալ պարագայում անհամարժեք է ոչ պատշաճ վարչական վարույթի առնչությամբ կարելի է դիմել Խորհրդարանական օմբուդսմանին, որը կարող է քննադատել համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին, անգամ՝ մեղադրանք առաջադրել պաշտոնական դիրքի չարաշահման համար: Այդպիսի քննադատությունը բավականին մեծ հեղինակություն է վայելում և ձևավորում է վարչական պրակտիկա, որին փաստացի սկսում են հետևել⁹:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում հանգամանալից անդրադառնանք «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջադրված կարգավորումներին: Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման արդյունքում Պաշտպանը նաև ընդունում է որոշում մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում (կետ 1): Այդ

դեպքում Պաշտպանը խախտում թույլ տված սուբյեկտին առաջարկում է ողջամիտ ժամկետում վերացնել այն՝ նշելով մարդու իրավունքների կամ ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները: Պաշտպանը պարտավոր է որոշման պատճենը որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, դրա պաշտոնատար անձին կամ կազմակերպությանը, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են: Համապատասխան սուբյեկտը պարտավոր է այն ստանալու օրվանից հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան երեսօրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին: Եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկել պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները: Կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը համապատասխան առաջարկով դիմում է իրավասու վարչական մարմնին (հոդ. 26, մասեր 2, 4, 5):

Նախագծի 26-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված կարգավորումից բխում է, որ՝

- 1) Պաշտպանի կողմից կարող է արվել պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու առաջարկ, առանց պատասխանատվության տեսակը կոնկրետացնելու.
- 2) համապատասխան առաջարկը կարող է արվել պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին.
- 3) այդպիսի առաջարկ կարող է արվել Պաշտպանի կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման ընդունման դեպքում.
- 4) առաջարկը կարող է արվել, եթե առկա



ԼՂՀ դատական իշխանություն

են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր:

Հատկանշական է, որ *կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքի հետ կապված, Նախագծով ամրագրված է, որ Պաշտպանը համապատասխան առաջարկով դիմում է իրավասու վարչական մարմիններին, այսինքն՝ րվյալ դեպքում նա պարտավոր է առաջարկով դիմել իրավասու մարմիններին, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր:*

Միաժամանակ, Նախագծի 10-րդ հոդվածում դրույթներ են բովանդակվում Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար պատասխանատվության մասին, որոնց համաձայն՝ Պաշտպանի գործունեությանը օրենքով չնախատեսված ցանկացած միջամտություն արգելվում է: Պաշտպանին ՀՀ Սահմանադրությամբ և վերը նշված օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելը, ինչպես նաև Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները հիշատակված օրենքին համապատասխան սահմանված ժամկետներում չտրամադրելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն¹⁰: Նշված նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները Պաշտպանին չտրամադրած պաշտոնատար անձը ենթակա է կարգապահական պատասխանատվության: Պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանի առաջարկի հիման վրա քննարկել և կարգապահական պատասխանատվության ենթարկել համապատասխան պաշտոնատար անձին, ինչպես նաև այդ մասին անմիջապես տեղեկացնել Պաշտպանին:

Նախագծի 10-րդ հոդվածով ամրագրված

կարգավորումներից բխում է, որ՝

1) մի դեպքում, խոսքը վերաբերում է պահանջվող նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները սահմանված ժամկետներում չտրամադրելու համար պատասխանատվությանը (մաս 3), առանց դրա հասցեատիրոջը (սուբյեկտին) մատնանշելու:

2) մյուս դեպքում, խոսքը վերաբերում է պահանջվող նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները Պաշտպանին առհասարակ չտրամադրելու համար պատասխանատվության կոնկրետ տեսակին՝ կարգապահական պատասխանատվությանը, և դրա կոնկրետ սուբյեկտին՝ համապատասխան պաշտոնատար անձին:

3) սահմանված է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնի կամ պաշտոնատար անձի պարտականությունը՝ Պաշտպանի առաջարկի հիման վրա քննարկել և կարգապահական պատասխանատվության ենթարկել համապատասխան պաշտոնատար անձին, ինչպես նաև այդ մասին անմիջապես տեղեկացնել Պաշտպանին¹¹:

Զանի որ վերոնշյալ դեպքում խոսքը վերաբերում է պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն, նպատակահարմար է օրենքով այդպիսի պարտականություն սահմանել իրավասու պաշտոնատար անձի, այլ ոչ՝ նաև պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնի համար:

Հարկ է նշել, որ Պաշտպանի հարցմանը սահմանված ժամկետներում չպատասխանելու կամ սահմանված ժամկետներում պահանջվող նյութերը չտրամադրելու համար ներկայումս սահմանված է վարչական պատասխանատվություն (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդ. 206⁸)¹²: Վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), իսկ վարչական



դատարանի իրավասությանը վերապահված հարցերով՝ *նշված օրենսգրքի 206⁸ հոդվածով նախատեսված վարչական իրավահախարհման վերաբերյալ գործերով՝ Պաշտպանը* (հոդ. 254, մաս 1, կետ 10):

Նկատի ունենալով վերոնշյալը՝ առաջարկում ենք Նախագծի 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմին կամ իրավասու պաշտոնատար անձին առաջարկում է պարասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները: Պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Պաշտպանի առաջարկը և արդյունքների մասին ... ժամկետում տեղեկացնել Պաշտպանին:

Եթե պաշտոնատար անձի արարքում առկա չեն զանցակազմի կամ հանցակազմի հարկանիշներ (առերևույթ հարկանիշներ), այսպեսով Պաշտպանն իրավասու պաշտոնատար անձին առաջարկում է նրան ենթարկել կարգապահական պարասխանատվության՝ անհրաժեշտության դեպքում նշելով կարգապահական փուլի տեսակը: Պաշտպանի առաջարկը պաշտոնատար անձին կարգապահական պարասխանատվության ենթարկելու հիմք է: Պաշտոնատար անձին կարգապահական պարասխանատվության ենթարկելու մասին Պաշտպանը պետք է տեղեկացվի անմիջապես: Պաշտպանի կողմից նշված կարգապահական փուլի տեսակը չընդերելու դեպքում իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանին ներկայացնել համապատասխան հիմնավորում:

Կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը պարասխա-

նատվության միջոց կիրառելու առաջարկով դիմում է իրավասու վարչական մարմիններին:»:

Խնդրո առարկայի հետ կապված, համառոտ դիտարկենք արտասահմանյան որոշ պետություններում գործող սահմանադրաիրավական կարգավորումները: Այսպես, օրինակ, **Լիտվայի** Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ Օմբուդսմանն իրավասու է առաջարկ ներկայացնել դատարան՝ մեղավոր պաշտոնյաներին իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելու հարցով: Համանման դրույթներ են բովանդակվում «Սեյմի օմբուդսմանների մասին» օրենքի 19-րդ հոդվածում¹³: **Սերբիայում** «Քաղաքացիների իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան՝ Պաշտպանն իրավասու է հրապարակային առաջարկություն ներկայացնել այն պաշտոնատար անձի պաշտոնանկության վերաբերյալ, որը պատասխանատու է քաղաքացու իրավունքի խախտման համար, այսինքն՝ Պաշտպանն իրավասու է կարգապահական ընթացակարգեր նախաձեռնել վարչական մարմնի այն աշխատակցի նկատմամբ, որն անմիջականորեն պատասխանատու է վնաս պատճառելու համար, երբ անձի կրկնվող վարքագիծն ի ցույց է դնում նրա մտադրությունը հրաժարվել Պաշտպանի հետ համագործակցությունից կամ երբ սահմանվում է, որ դրա հետևանքով քաղաքացու պատճառվել է նյութական կամ այլ լուրջ վնաս¹⁴: Եթե պարզվում է, որ վարչական մարմնի աշխատակցի կամ պաշտոնատար անձի արարքում առկա են քրեորեն պատժելի արարքի կամ վարչական իրավախախտման հատկանիշներ, Պաշտպանն իրավասու է քրեական կամ վարչական ընթացակարգեր նախաձեռնելու միջնորդություն ներկայացնել: **Սլովենիայում** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 39-րդ հոդվածով ամրագրված է, որ Պաշտպանը կարող է առաջարկել կարգապահական վարույթ հարուցել այն մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք իրականացրել են ոչ պատշաճ վարչարարություն, ինչը հանգեցրել է անարդարության¹⁵:



Հաշվի առնելով վերոնշյալ օրենսդրական առաջարկությունները՝ կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին առնչվող օրենսդրական զարգացումները կարելի է տեսնել այն ուղղությամբ, որպեսզի վերջինս հանդես գա որպես հիշյալ հիմնախնդրի լուծման առումով առանցքային դերակատարություն ունեցող ինստիտուտ՝ հաշվի առնելով սահմանադրական նոր կարգավորումներից բխող «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի լրամշակված նախագծով¹⁶ առաջարկված համապատասխան կարգավորումների՝ Օրինաի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետում տեղ գրած ձևակերպման իրավական բովանդակությանը համահունչ դարձնելու հնարավորությունը:

1. *St'u THE AARHUS CONVENTION: AN IMPLEMENTATION GUIDE*, United Nations Economic Commission for Europe, Second edition, 2013, էջ 203, http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/ppdm/Aarhus_Implementation_Guide_second_edition_-_text_only.pdf:

2. Օրինակ՝ Կրիստինաի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն պետք է սրեղծվի օրենքին համապատասխան և իրականացնի իր իրավասության շրջանակներում գործերի քննության գործառնությունները՝ իրավական նորմերի հիման վրա և սահմանված կարգով իրականացվող ընթացակարգերի միջոցով (*Sramek v. Austria Application No. 8790/79, ECHR, Judgement of 22 October 1984, para. 36; CoUme and others v. Belgium, Application Nos. 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 and 33210/96, ECHR, Judgement of 22 June 2000*): Գրա անդամները պետք է լինեն անկախ և անկողնակալ: Անկախությունը որոշվում է անդամների նշանակման կարգով, նրանց լիազորությունների ժամկետով և արտաքին ճնշումների դեմ առկա երաշխիքներով (*Campbell and Fell v. United Kingdom, Application Nos. 7819/77 and 7878/77, ECHR, Judgement of 28 June 1984, para. 78*): Դատարանը մի շարք դեպքերում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքին համապատասխան սրեղծված փրի-

բունալ է դիտարկել նույնիսկ այնպիսի մարմինների, որոնք համապատասխան պետության օրենսդրությամբ չեն ընդգրկվում դատական իշխանության համակարգում (օրինակ՝ *Sramek v. Austria Application No. 8790/79, ECHR, Judgement of 22 October 1984, para. 36*):

Եվրոպական միության արդարադատության դատարանը ևս մի շարք դեպքերում ներպետական դատական իշխանության համակարգում չընդգրկված մարմինները դիտարկել է որպես դատարան կամ փրիքունալ՝ եվրոպական միության իրավունքի տեսանկյունից (օրինակ՝ *Case C-205/08, Umweltanwalt von Kärnten v. Kärntner Landesregierung, Judgement of the Court (Second Chamber) of 10 December 2009, para. 34-39*):

3. Մանրամասն, փեԲս Findings and recommendations with regard to communication ACCC/C/2012/76 concerning compliance by Bulgaria, Access to justice, Article 9(4) of the Convention, 7 March 2016:

4. *St'u THE AARHUS CONVENTION: AN IMPLEMENTATION GUIDE*, United Nations Economic Commission for Europe, Second edition, 2013, http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/ppdm/Aarhus_Implementation_Guide_second_edition_-_text_only.pdf:

5. Օրինաի կոնվենցիայի առնչությամբ բանակցությունների ընթացքում Դանիան, Ֆինլանդիան, Նորվեգիան և Շվեդիան հայտարարություն են արել օմբուդանսի ինստիտուտը Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համապետքաբում մեկնաբանելու առումով՝ հավաստելով, որ գործնական տեսանկյունից այն համապատասխանում է Կոնվենցիայի պահանջներին:

6. Օրինակ՝ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաշայն՝ քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը. 1) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անչին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ նա տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները... 5) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անչին, որի որոշումներով կամ



գործողություններով (սևագործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները:

7. *Sh'u M'ULLEROV H. Public Participation in Environmental Decision-Making: Implementation of the Aarhus Convention, Praha, 2013, էջ 209-214, http://www.ilaw.cas.cz/get.php?file=data/files/epub/aa_rhus_fin.pdf:*

8. *Sh'u Access to justice in environmental matters – Sweden, https://e-justice.europa.eu/content_access_to_justice_in_environmental_matters-300-se-maximizeMS-en.do?member=1:*

9. *Sh'u Communication to the Aarhus Convention Compliance Committee concerning compliance by Sweden with provisions of the Convention in relation to permits issued for wind turbines and the applicable legislation in general (ACCC/C/2013/81) // Ministry of the Environment Sweden, http://www.unece.org/fileadm/n/DAM/en/v/pp/c/omplianc/C2013-81/Communication_from_Party/frParty_26Sep2013.pdf:*

10. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաչափ՝ Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անչանց կողմից նշված օրենքով սահմանված Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելն առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախարհված կարգով և չափով:

Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, ինչպես նաև նրան սպառնալու կամ նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն (ՀՀ քր. օր-ի հոդ. 3321, 3322):

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ պետական և փոփոխական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անչինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, փեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:

11. Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասին հա-

մապատասխան՝ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում իր իրավասության շրջանակում Պաշտպանը լիազորված է հանդես գալ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հաղորդմամբ: Հաղորդումը սրացած՝ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինը կամ իրավասու ներկայացուցիչը պարտավոր է հաղորդման քննարկման արդյունքների մասին փեղեկացնել Պաշտպանին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում (կետր 9):

12. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի 556-րդ հոդվածում դրույթներ են բովանդակվում Մարդու իրավունքների պաշտպանի կամ նրան առընթեր խոչընդոտումների կանխարգելման փորձագիտական խորհրդի օրինական պահանջները չկատարելու համար պատասխանատվության մասին:

13. *Sh'u LAW ON THE SEIMAS OMBUDSMEN (3 December 1998 N VIII-950 (As last amended on 13 May 2010 – N XI-808), Vilnius):*

14. *Sh'u LAW ON THE PROTECTOR OF CITIZENS (was published in the “Official Gazette of the Republic of Serbia”, no. 79/2005 and 54/2007):*

15. *Sh'u Human Rights Ombudsman Act, <http://www.varuh-rs.si/legal-framework/constitution-laws/human-rights-ombudsman-act/?L=6#interim>:*

Վրդ կապակցությամբ, փեՔս նաև THE REPUBLIC OF THE PHILIPPINES, AN ACT PROVIDING FOR THE FUNCTIONAL AND STRUCTURAL ORGANIZATION OF THE OFFICE OF THE OMBUDSMAN, AND FOR OTHER PURPOSES (Republic Act. 6770), Section 21, http://www.ombudsman.gov.ph/docs/republicacts/Republic_Act_No_6770.pdf:

16. *Sh'u <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=41821>:*